ԼԻԶԻՆԳՈՎ ՆԵՐՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱՕՊՏԻԿԱԿԱՆ ՓՈԽԱՐԿԻՉԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՄԼՔԲ-2022/1-ԵՊԲՀ

ք.Երևան «21» «հունվարի» 2022թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամը ի դեմս ռեկտոր Ա.Մուրադյանի, որը գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գույքի վերջնական օգտագործող կամ Լիզինգառու», մի կողմից, «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ն.Անդրեասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» և «ԱԿԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ կամ Լիզինգատու» մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Լիզինգառուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), Լիզինգառուն պարտավորվում է ընդունել ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է վճարել դրա համար Վաճառողին: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդը և/կամ Լիզինգառուն իրավունք ունեն՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Լիզինգառուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.4 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Գնորդը պարտավոր է՝

2.3.1 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Վաճառողն իրավունք ունի՝

2.4.1 Լիզինգառուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.4.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Լիզինգառուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.4.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.4.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.4.4 Գնորդի և/կամ Լիզինգառուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.5 Վաճառողը պարտավոր է՝

2.5.1 Գնորդին և/կամ Լիզինգառուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.5.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի և/կամ Լիզինգառուի կողմից սահմանված ժամկետներում:

2.5.3 Գնորդին և/կամ Լիզինգառուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.5.4 Գնորդին և/կամ Լիզինգառուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.5.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.5.6 Հետ տանել Գնորդի և/կամ Լիզինգառուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.5.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.5.8 Գնորդին և/կամ Լիզինգառուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.5.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո թե՛ Գնորդին, թե՛ Լիզինգառուին հատուցել վերջիններիցս յուրաքանչյուրին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.5.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել թե՛ Գնորդին, թե՛ Լիզինգառուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 84.000.000,00 /ութսունչորս միլիոն/ ՀՀ դրամ, որից 63.000.000,00 /վաթսուներեք միլիոն/ լիզինգի առարկայի գինը, 21.000.000,00 /քսանմեկ միլիոն/ լիզինգի պայմանների գինը:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները, ակնկալվող շահույթը, լիզինգի պայմանագրի արժեքը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է, և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը, իսկ կնքվելիք լիզինգի պայմանագրի գինը գործոնային՝ տոկոսադրույքի և ապահովագրավճարի մասով:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով:

3.3 Լիզինգառուն իրեն հանձնված ապրանքի ժամանակավոր օգտագործման և տիրապետման դիմաց Լիզինգատուին վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Լիզինգատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն կնքվելիք լիզինգի պայմանգրի անբաժանելի մաս հանդիսացող վճարման ժամանակացույցի: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի և/կամ Լիզինառուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի ներկայացուցչի, և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի ներկայացուցչի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում Գնորդի ներկայացուցիչը պետք է լինի Լիզինգառուն կամ վերջինիս ներկայացուցիչը: Սույն դեպքում ապրանքի հանձնման-ընդունման ակտի կնքման պահից ապրանքը համարվում է Գնորդի կողմից Լիզինգառուի ժամանակավոր օգտագործմանը և տիրապետմանը հանձնված:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Լիզինգառուն պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps

համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Լիզինգառուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը և/կամ Լիզինգառուն ձեռնարկում են նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կարող են կիրառել պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Լիզինգառուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Լիզինգառուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[9] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Սույն գլխի դրույթները կիրառման ենթակա չեն Լիզինգառուի և Լիզինգատուի միջև պայմանագրային իրավահարաբերությունների նկատմամբ:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[9] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպասնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագիրը կնքվելուց հետո Գնորդի և Լիզինգառուի միջև՝ լիզինգի պայմանագիր, որով կարգավորվերու են լիզինգին վերաբերվող մի շարք առանձնահատուկ պայմաններ:

Պայմանագրի ընդհանուր գինը 50 մլն. ՀՀ դրամին հավասար լինելու կամ գերազանցելու դեպքում, պայմանագրի կնքումը հաստատվում է հոգաբարձուների խորհուրդի կողմից:

8.2 Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը և Լիզինառուն համատեղ որոշմամբ կարող են լուծել Վաճառողի հետ կնքված պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը և Լիզինգառուն չեն կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց ղնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի և Լիզինգառուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Լիզինգառուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը և/կամ Լիզինգատուն այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների և լիզինգի պայմանագրի առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գույքի վերջնական օգտագործող/Լիզինգառու	Վաճառող	Գնորդ/Լիզինգատու
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ Հասցե՝ ք.Երևան, Կորյունի 2 Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ Հ/հ՝ 1150016651380 0 ՀՎՀՀ՝ 01503448 Ռեկտոր Ա.Մուրադյան /ստորագրություն/ Կ.Տ	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ Հասցե՝ ք.Երևան, Հերացի 7 Բանկ՝ ԱԿԲԱ բանկ ԲԲԸ Հ/հ՝ 220410123990000 ՀՎՀՀ՝ 02604367 Տնօրեն՝ Ն.Անդրեասյան /ստորագրություն/ Կ.Տ	«ԱԿԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ Հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 10, 132-133 տարածք Բանկ՝ ԱԿԲԱ բանկ ԲԲԸ Հ/հ՝ 220009620224000 ՀՎՀՀ՝ 02567702 Գլխավոր տնօրեն՝ Ա.Գասպարյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« 21 » « 11 » 2022թ. կնքված
ԲՄԼՁԲ-2022/1-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Լիզինգի առարկայի մակնիշը և մոդելը	տեխնիկական բնութագիրը	չ/մ	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	65321100	Լիզինգով ներվիրահատական էլեկտրաօպտիկական փոխարկիչի ժամանակավոր տիրապետում և շահագործում՝ պայմանագրի ավարտից հետո Պատվիրատուի սեփականության անցնելու պայմանով, որից	GE OEC One	Նայել Հավելվածում	դրամ	84.000.000,00	84.000.000,00	1	ք.Երևան, Աբովյան 60	1	համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու և լիզինգի պայմանագիր կնքելու օրվանից օրվանից սկսած՝ 20 օրվա ընթացքում
		լիզինգի առարկայի գին				63.000.000,00					
		լիզինգի պայմանների գին				21.000.000,00					

Գույքի վերջնական օգտագործող/Լիզինգառու	Վաճառող	Գնորդ/Լիզինգատու
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ Հասցե՝ ք.Երևան, Կորյունի 2 Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ Հ/հ՝ 11500166513800 ՀՎՀՀ՝ 01503448 Ռեկտոր Ա.Միրզայան /ստորագրություն/ Կ.Տ	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ Հասցե՝ ք.Երևան, Հերացի 7 Բանկ՝ ԱԿԲԱ բանկ ԲԲԸ Հ/հ՝ 220410123990000 ՀՎՀՀ՝ 02604367 Տնօրեն՝ Ն.Անդրեասյան /ստորագրություն/ Կ.Տ	«ԱԿԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ Հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 10, 132-133 տարածք Բանկ՝ ԱԿԲԱ բանկ ԲԲԸ Հ/հ՝ 220009620224000 ՀՎՀՀ՝ 02567702 Գլխավոր տնօրեն Ա.Գասպարյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված

Լիզինգով ներվիրահատական էլեկտրաօպտիկական փոխարկիչի ժամանակավոր տիրապետում և շահագործում՝ պայմանագրի ավարտից հետո Պատվիրատուի սեփականությանն անցնելու պայմանով

Լիզինգի առարկա.

C-աձև աղեղով ռենտգեն համակարգ՝ նախատեսված մեծահասակների և մանկական տարբեր վիրահատական միջամտությունների (վնասվածքաբանություն, ուռոլոգիա, անոթային վիրաբուժություն, գաստրոէնտերոլոգիա, նեյրովիրաբուժություն և այլն) ընթացքում օգտագործման համար

«Բոլորը մեկում» համակարգ, որի համակցված սենսորային վիզուալիզացիոն մոնիտորը և սենսորային կառավարման պլանշետ-էկրանը հեշտացնում են աշխատանքի ընթացքը և դոզայի կառավարումը՝ թույլ տալով ստանալ շատ բարձր որակի պատկեր:

Մոնիտոր և կառավարման սենսորային պլանշետ-էկրան

27″ անկյունագծով պատկերային /վիզուալիզացիայի/ մոնիտորի առկայություն

Վիզուալազիացիայի մոնիտորի վրա միաժամանակ ցուցադրվող պատկերների քանակը՝ 2

Վիզուալիզացիայի մոնիտորի մատրիցայի չափը ՝ 1920x1080 պիքսել

Վիզուալիզացիայի մոնիտորի թևի (կրոնշտեյնի) պտույտը՝ C-աղեղի հիմնական սյան նկատմամբ՝ 210 ◦

Վիզուալիզացիայի մոնիտորի պտույտը հորիզոնական հարթությունում՝ կրոնշտեյնի (թևի) նկատմամբ ՝ 180◦

Վիզուալիզացիայի մոնիտորի թեքումը ուղղահայաց հարթությունում (վերև/ներքև)՝ 5◦ և 25 ◦

Վիզուալիզացիայի մոնիտորի ուղղահայաց շարժման ավելացման հնարավորություն ՝ 40սմ տիրույթում

10.1 ″ կառավարման սենսորային պլանշետ-էկրանի առկայություն

Կառավարման սենսորային պլանշետ-էկրանի թևի (կրոնշտեյնի) պտույտը՝ 270 ◦

Ուղղահայաց հարթությունում կառավարման սենսորային պլանշետ-էկրանի թեքման տիրույթը ՝ 40◦

Պատկերային մոնիտորը և կառավարման սենսորային պլանշետ-էկրանը տեղադրված են երկու համակցված կրոնշտեյնների (թևերի) վրա

Գեներատոր/մոնոբլոկ

Բարձր հաճախականության գեներատոր (փոխակերպման հաճախականությունը) ՝ 40 կՀց

Կարճաժամկետ հզորությունը ՝ 2,2 կՎտ

Մոնոբլոկի կոմպակտ դիզայն

Անոդի առավելագույն լարումը՝ 110 կՎ

Առավելագույն անոդային հոսանքը ռենտգենոգրաֆիայի կամ թվային կետի ռեժիմում ՝ 20 մԱ

Առավելագույն անոդային հոսանքը անդադար ռենտգենոսկոպիայի ժամանակ ՝ 12 մԱ

Առավելագույն անոդային հոսանքը իմպուլսային ռենտգենոսկոպիայի ժամանակ 25 մԱ

Ընդհանուր ֆիլտրացիան ՝ 3,35 մմ Ալ

C-աձև աղեղ

Ազատ տարածությունը ՝ 78 սմ

Խորությունը՝ 66 սմ

Պտույտը երկայնական հարթությունում (օրբիտալ պտույտ)՝ 120 ◦

Անկյունային շարժ (ուղղահայաց հարթությունում՝ հորիզոնական առանցքի շուրջ)՝ ±205° (410°)
Հորիզոնական տեղաշարժը/շարժը՝ 20 սմ
Մոտորիզացված վերտիկալ տեղաշարժը՝ 45սմ
Ֆոկուս-ընդունիչ հեռավորությունը՝ 1000 մմ
Պտույտը՝ ուղղահայաց հարթության նկատմամբ՝ ±12.5° (25°)

Ռենտգենյան խողովակ

Անոդի տեսակը՝ Վոլֆրամ, անշարժ
Փոքր ֆոկուսային հետքի չափը՝ 0.6x1.4 մմ
Մեծ ֆոկուսային հետքի չափը ՝ 1.4 մմ
Անոդի թիրախային անկյունը՝ 10°
Անոդի ջերմային հզորությունը՝ 53 կՋ
Սառեցման առավելագույն արագությունը՝ 12 500 ջերմային միավոր/րոպե
Էկրանի վրա խողովակի տաքացման ցուցիչի հնարավորություն

Իրիսային/փեղկավոր կոլիմատոր

Իրիսային մոտորիզացված դիաֆրագմի առկայություն

Վիզուալիզացիայի առանձնահատկությունները/ ֆունկցիաներ

Ավտոմատ կերպով կարգավորում է պայծառությունն ու կոնտրաստը՝ պատկերի որակը բարելավելու համար
Ճառագայթման հզորության ավտոմատ կառավարում
Պատկերի եզրերի լավացման ֆիլտրի առկայություն
Նախադրված վիզուալիզացիայի պրոֆիլներ՝ ստանդարտ, խիտ անատոմիական կառուցվածքի համար, վերջույթներ, կրծքավանդակ, ճառագայթման նվազեցված դոզայով

Պատկերի ուժեղացուցիչ

3 ռեժիմային Պատկերի ուժեղացուցիչ, աշխատանքային դաշտի չափերը՝ 230/160/120մմ
Թողունակությունը՝ 22/28/33 զույգ տող/սմ
Կենտրոնական թողունակությունը՝ 52/58/68 զույգ տող/սմ
DQE-ն ՝ 59,5 կՎ-ի դեպքում՝ 65 %

Ուղղահայաց ռենտգենյան ճառագայթները հավաքող անշարժ ֆիլտր

Տրամագիծը՝ 248 մմ
Հարաբերակցությունը՝ 10:1
Խտությունը՝ 60 լամ/սմ

Բարձր լուծելիության տեսախցիկ, 1000x1000 պիքսել

Թողունակությունը՝ 148.5 ՄՀց
Ազդանշան-աղմուկ հարաբերակցությունը՝ 58 դԲ
Լիովին թվային ինտերֆեյս

Թվային պրոցեսոր և տվյալների պահպանում

16-բիթ պատկերի մշակում

Պատկերի լուծելիությունը՝ 1000x1000 էլեմենտ

Թվային հիշողություն՝ վերջին պատկերի պահպանում և 100,000 ընթացիկ պատկերներ

Հետազոտությունների կառավարում

Հիվանդի մասին տեղեկատվություն

Հետազոտությունների ցանկ

Անհատականացված հիվանդի մասին տեղեկատվություն

Ճառագայթման ընդհանուր ազդեցության մասին տեղեկատվության ցուցադրում

Օգտագործողի ինտերֆեյս

Ամբողջ համակարգը կառավարվում է համակարգչով, ծրագրային ապահովումը պետք է ենթակա լինի թարմացման

Բազմաֆունկցիոնալ ռենտգեն փոխարկիչներ՝

Ոտքով փոխարկիչ

Ձեռքով փոխարկիչ

Պատկերների պահպանում և օգտագործում ; պատկերների պատճենում; պահպանված պատկերների հետմշակում

Հիշողություն և պատկերի մշակում, հատուկ ծրագրային ապահովում

Ռեկուրսիվ զտիչ՝ շարժման հարմարեցմամբ

Աղմուկների զտման/ֆիլտրման հնարավորություն՝ բարձրորակ պատկերների ստացման համար

Բարձրորակ պատկերների ստացում՝ նույնիսկ տեսադաշտում շարժան առկայության դեպքում

Իրական ժամանակում պայծառության/կոնտրաստի ավտոմատ կարգավորում

Պատկերի ուրվագծերի բարելավում

Նեգատիվ պատկերների ստացում

Պատկերների պահպանում և ավտո-պահպանում

Պատկերների վերադասավորում

Վերջին պատկերի պահպանում

Պատկերի շրջում

Պատկերի շրջադարձ

360 աստիճան ստատիկ և կենդանի պատկերի ռոտացիա

Պատկերի անոտացիա

Կառավարման և աշխատանքային կայանի պատկերների հետ աշխատելու բոլոր գործառույթները հասանելի են սենսորային մոնիտորից

Դոզայի մասին ինֆորմացիայի դիտում՝ ընթացիկ հետազոտության էքսպոզիցիայի պարամետրերը և ճառագայթման դոզայի մասին տեղեկատվություն՝ պատկերային մոնիտորի էկրանին

Պատկերի վրա հեռավորությունների և անկյունների չափման գործառույթ

Տարածաչափական կարգաբերման հնարավորություն՝ ըստ օրինակելի նմուշի

Իմպուլսների հաճախականությունը իմպուլսային ռենտգենոսկոպիայի ժամանակ՝ 1/2/4/8 իմպ/վրկ
Կադրերի հաճախականությունը՝ 25 կադր/վրկ
Թվային պայծառության և կոնտրաստի ավտոմատ և ձեռքով կառավարում
Մետաղական կոնստրուկցիաների արտեֆակտների վերացման գործառույթ
Պատկերների ձայնագրում USB կրիչի վրա
Ճառագայթման դոզայի կառավարում՝
Կոլիմատորի դիրքավորում՝ առանց լրացուցիչ ճառագայթման
Կոլիմատորի նախադիտում/Preview
Պատկերի շրջադարձ
Պատկերի ցուցադրում ձախից աջ և վերևից ներքև
Իրական ժամանակում դոզային ճառագայթման ազդեցության մասին տեղեկատվություն
Ցածր դոզայի ռեժիմ
Իմպուլսային ռենտգենոսկոպիայի ռեժիմ
Պատկերների համար աննոտացիաներ ստեղծելու, ինչպես նաև մարկերներ սահմանելու, մեկնաբանություններ ավելացնելու և պատկերներ կտրելու հնարավորության առկայություն:
Ֆունկցիան թույլ է տալիս չափել հեռավորություններն ու անկյունները և կատարել անհրաժեշտ չափաբերումը ՝ բարձր ճշգրտության հասնելու համար:
Ինտեգրված հիմնական DICOM ինտերֆեյս
DICOM-ի օգնությամբ թվային շարժական ռենտգեն համակարգը ապահովում է անհրաժեշտ կապի ծառայությունները
Աշխատանքային ցուցակների ստացում սերվերից:
DICOM տվյալների բազայում հետազոտությունների որոնում:
Ընտրված պատկերների վերբեռնում DICOM սերվեր:
Ռենտգենոսկոպիկ պատկերների տպման հնարավություն՝ DICOM տպիչի միջոցով:
Կատարված բոլոր պրոցեդուրաների ուսումնասիրության համար դոզայի կառուցվածքային հաշվետվության ստեղծում: Այս հաշվետվությունը կարող է ուղարկվել DICOM ցանցով կամ արտահանվել CD/DVD կամ USB կրիչների միջոցով
Ոտնակ՝ 5 մետր մալուխով
Ներկառուցված լազերային ցուցիչի առկայություն
Բժշկի համար լրացուցիչ աշխատանքային կայանի առկայություն՝ իր ծրագրային ապահովմամբ, հետմշակման և արխիվացման հնարավորությամբ ՝ 2 ՏԲ մշտական հիշողություն ՝ նախատեսված արխիվացման համար: Կայանը նախատեսված է բժիշկների աշխատանքային սենյակում տեղադրման/օգտագործման համար և ապահովում է անմիջական կապ C-ձև աղեղի համալիրի: աշխատանքային կայանի հետ:
Որակի վկայականներ
1. EC Certificate, FDA
2. ISO 13485, ISO9001
IEC60601-1 ստանդարտի համապատասխանություն՝ իր հարակից և առանձին ստանդարտներով:

Արտադրության տարեթիվը՝ 2022 թվական:

Նոր է, չօգտագործված:
Երաշխիքը՝ 1 տարի տեղադրման պահից, ինչպես նաև պայմանագրի գործողության ողջ ընթացքում հետերաշխիքային տեխնիկական զննում տարեկան 2 անգամ:
Տեղադրումը, ուսուցումը, երաշխիքային և հետերաշխիքային սպասարկումը իրականացվում է արտադրող ընկերության կողմից ռենտգենյան սարքավորումների հետ պրակտիկ աշխատանքների վերաբերյալ սերտիֆիկացում անցած ինժեների կողմից: Սերտիֆիկատի առկայություն:

<u>Լիզինգի պայմաններ.</u>

Ժամկետը՝ 42 ամիս:
Տարեկան անվանական տոկոսադրույքը՝ 15%:
Առանց կանխավճարի:
Միջնորդավճարը՝ 0%:
Լիզինգի առարկաի ապահովագրություն մինչև 0,5 % վճարով լիզինգի ամբողջ ժամանակահատվածում:
Մարումները աննուիտետային, ամսական:
Լիզինգով տրամադրված լիզինգի առարկան, լիզինգի ժամկետը լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալը, անցնում է Պատվիրատուի սեփականությանը՝ վերջինիս կողմից լիզինգի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը վճարելու և սեփականության իրավունքի վճարը վճարելու պայմանով:

Գույքի վերջնական օգտագործող/Լիզինգառու	Վաճառող	Գնորդ/Լիզինգատու
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ Հասցե՝ ք.Երևան, Կորյունի 2 Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ Հ/հ՝ 1150016613800 ՀՎՀՀ՝ 01503448 Ռեկտոր՝ Ա.Մուրադյան /ստորագրություն/ Կ.Տ	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ Հասցե՝ ք.Երևան, Հերացի 7 Բանկ՝ ԱԿԲԱ բանկ ԲԲԸ Հ/հ՝ 220410123990000 ՀՎՀՀ՝ 02604367 Տնօրեն՝ Ն.Անդրեասյան /ստորագրություն/ Կ.Տ	«ԱԿԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ Հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 10, 132-133 տարածք Բանկ՝ ԱԿԲԱ բանկ ԲԲԸ Հ/հ՝ 220009620224000 ՀՎՀՀ՝ 02567702 Գլխավոր տնօրեն՝ Ա.Գասպարյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«21» «11» 2022թ. կնքված

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

Գույքի վերջնական օգտագործող/Լիզինգառու	Վաճառող	Գնորդ/Լիզինգատու
---	---	---
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3
« » « » 2022թ. կնքված
ԲՄԼՁԲ-2022/1-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » « » 2022թ. կնքված
ԲՄԼՁԲ-2022/1-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն